ԴԱՌՆԱՄԱՊԵՏԸ

ԳՐԵՑ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱԶ

Ինչ որ վառուած կ'երազէինք՝ ասենք տեսանք՝ յետոյ ի՞նչ,
Ասենք մենք էլ երջանկացանք՝ իրար հասանք՝ յետոյ ինչ,
Ասենք՝ աշխարհն էլ մեզ տուին, դրախտում էլ ման եկանք,
Ասրծուց էլ վեր դասուեցինք՝ էլ ի՞նչ յուսանք՝ յետոյ ի՞նչ...

* * *

Հրաշքներին հաւատում եմ, երբ նայում եմ իմ ազգին՝
Հազար մազէ կամուրջ անցաւ եւ անցնում է նա կրկին,
Հազարն անցել՝ այս մի մազէ նուրբ կամուրջն էլ որ անցաւ՝
Նոր եմ իրաւ հազար սրտով հաւատալու հրաշքին...

* * *

Քսաներորդ դարին ասի՝ ի՞նչդ է վսեմ, արնախում,
Բաւական է եղեռն Հայոց, որ քեզ ասեմ արնախում,
Երբ չես քաւում ծով մեղքերդ, երբ լեռներս են դեռ դերուած,
Երկու ահեղ արնախումիդ ի՞նչպէս չասեմ արնախում:

* * *

Թէ միշտ չարը յաղթող լինէր՝ կարիճն արծուի թեւ կ'ունենար,
Թէ յաղթուէր բարին էլ միշտ՝ ծիածանն էլ սեւ կ'ունենար,
Ա՜խ, ո՛չ բարին՝ աշխարհով մէկ, ո՛չ էլ չարն է չքանալու,
Ի՞նչ գիտնայի, որ չարն, աւա՜ղ, հազար ու մի ձեւ կ'ունենար:

* * *

Զուած թռչնի բների պէս ամայացան յոյսերս,
Դեռ կոյր բախտիս խաւարներում խարխափում են լոյսերս,
Մի ծառ էի, բայց սրտիս մէջ մի ողջ անտառ մոխրացաւ,
Վերադարձող հաւք էլ չեղան յոյսերիս յոյսն ու սէրս:

Այսքան տարի այս երգերով՝ միտք եմ անում, ի՞նչ արի,
Այս երգերով, այս վէրքերով ինչ որ արի՝ ջինջ արի,
Ես իմ մահը հազար տարով դուրս վանեցի աշխարհից, —
Թեկուզ հազարն երազ լինի՝ արթուն վիշտս նինջ արի:

* * *

Երգը գայլին մարդ կը դարձնի, բայց քանի՞ բիւր տաղ հանեմ,
Դառնամ քանի՞ Նարեկացի, որ մարդ–մարդը քաղ հանեմ,
Ա՜խ, չէ, մարդը այս է, որ կայ՝ հազար դար էլ յետոյ դամ՝
Հազար Նարեկ էլ ձեզ դառնամ՝ նորից պիտի ա՜խ անեմ...

* * *

Մի մարդու մէջ երկու մարդ կայ, մէկը՝ բարի, մէկը՝ չար,
Սեւ ու ճերմակ ցուլերի պէս հա բախուում են անդադար,
Հա բախուում են ճակատ–ճակտի, բայց ոչ մէկը չի յաղթում,
Աւա՜ղ, մի ողջ մարդկութիւն է մի բուռ մարդն էլ, ո՜վ աշխարհ:

* * *

Մարդու նման անդունդ մի՝ չէք, մութն է լուսազարդն անգամ,
Ամենախոր ծովից խորն է ամենաեղկ մարդն անգամ,
Ահա ինչո՞ւ բախտի նաւ է սուզում մարդն էլ ծովի պէս,
Ամենասեւ ծովից սեւ է իր ժպիտի վարդն անգամ:

* * *

Մի ճամբորդ է յոյսով գնում, գնում, գնում՝ չի հասնում,
Իր ստուերն է առաջ թռել՝ ինքը գնում, չի հասնում,
Վախենում եմ ստուերն իրեն պատանք դառնայ կէս ճամբիս,
Մարդը նոր չէ, որ իր մտքից ետ է մնում՝ չի հասնում...

* * *

Վշտի ոչ մի կնճիռ չկայ արեւմուտքի ճակատին, —
Ինչո՞վ ամպեմ, որ կայծակեմ սուլթան–թուրքի ճակատին,
Կէս դար անցաւ, բայց մահիկը դեռ չի հանուել կախազան,
Մասիս, դէթ մի քար տուր՝ խփեմ արեւմուտքի ճակատին...

* * *

Ծովի մօտով անցնող գետակ, ծովին չատ մի՛ մօտենայ,
Քեզ կուլ կը տայ, ոսկի վտակ՝ մովին չատ մի՛ մօտենայ,
Ինչ որ օտար զօրքը չարաւ՝ քո խարուելը քեզ կ'անի՝
Քեզ կը ձուլէ ծովն անյատակ, ծովին չատ մի՛ մօտենայ:

* * *

Զաղացքարի տակ էլ ձգէք՝ մի հատիկ եմ, դուրս կը գամ,
Գերեզմանս էլ թէ կորցնէք՝ նորից ազգիս յոյս կը տայ,
Այնքան պիտի Մասիս գոռամ, մինչեւ ես էլ մասիսում, —
Լոկ Մասիսի ձիւնից արեւ ու ձնծաղիկ դուրս կը գամ...

Գարուն, դէթ դու ինձ ծաղկունք բեր՝ ծաղիկ հասակս է անցնում,
Դէթ մի վերջին զդուանք ու սէր, ոսկեղխակս է անցնում, —
Մի՞թէ պիտի մեռնող աչքերս աչքով փակող չունենամ,
Ամէն թաղման թափօրի հետ մահապակս է անցնում:

* * *

Ծաղիկները լեղու չունեն, որ բողոքեն Աստծուն...
Ես որ ունեմ, ի՞նչ եմ շահել աղօթքներով իմ կոծուն, —
Զէ՛, Աստուած կա՛յ, մա՛րդը չկայ, ուրիշ է մարդն երազիս, —
Զիւնից մաքուր, կրակից տաք մարդն է ցնորքն իմ ցնծուն:

* * *

Հազար տարի յետոյ էլ դամ՝ ձեզ լուսնի տակ կը տեսնեմ,
Դուրս չէք ելնի արեւի տակ, ձեզ պաղ լուսնեակ կը տեսնեմ,
Ա՜խ, մարդ ժայռը չի յղկուի՝ թեկուզ ծովերն իրար տան,
Անթիւ դարեր գան ու գնան՝ մարդուն վայրագ կը տեսնեն...

* * *

Թփին մեռած ծաղկի նման միշտ կոյս մնաց իմ ոգին,
Խաւարի մէջ լուսաստղի յոյս ու լոյս մնաց իմ ոգին,
Հալուեց, գնաց, անէացաւ իմ մարմինը՝ մոմի պէս,
Յաւերժութեան տաճարի մէջ Յիսուս մնաց իմ ոգին:

* * *

Ինձնից յետոյ ինչ էլ լինի՝ ես ձեր ահը չեմ ուզում,
Դրախտ լինի թէ ջրհեղեղ՝ ես ձեր դահը չեմ ուզում,
Ջրհեղեղին՝ Նոյան նման, կ'երթամ կ'իջնեմ Մասիսին,
Ես իմ երկրի սարը կ'ուզեմ, այլոց մահը չեմ ուզում:

* * *

Իմ ոգի կեանքում սպասեցի՝ սպասածս դուրս չեկաւ,
Սրտիս մէջ էլ ծովեր լցի, բայց լցածս դուրս չեկաւ,
Աստուածային կենն յայտնուեց երազներիս մէջ միայն, —
Ում զրկեցի՝ ինձ էլ պղծեց, երազածս դուրս չեկաւ...

* * *

Ի՞նչ իմանամ սիրուս գերին ո՞ր նարգիզը կը լինի,
Սիրուս վշտին կշռաքար միայն Սիսը կը լինի,
Եօթ Վանայ ծով ունի իր մէջ մի կաթիլը արցունքիս, —
Հայոց վշտիս կշռաքար լոկ Մասիսը կը լինի...

* * *

Մոլորուել եմ Վանայ ծովիս ու Սեւանայ ծովիս մէջ,
Աստ հովանում, անդ վառուում եմ՝ գերի Վանայ ծովիս մէջ,
Թէ վառուում եմ, թէ հովանում, թէ հովանում, թէ վառուում,
Գերեզմանս էլ վայ թէ վառուի, հայ Նիրվանայ հովիս մէջ:

Զինն ինքը, որ քեզ մեծ ասաց՝ որդիդ ի՞նչպէս չասի մեծ,
Խօսքիդ նայեց՝ անկեղծ ասաց, երգիդ ի՞նչպէս չասի մեծ,
Մի Նարեկի վեստրագրիչ, Թուր–կայծակի մի Սասնայ՝
Բաւ կը լինի, ո՜վ բանաստեղծ, ազգիդ ի՞նչպէս չասես մեծ...

* * *

Գախտնիքների քարանձաւ է թեկուզ լուսէ կինը միշտ,
Ինձ որ դաւեց՝ քեզ կը դաւէ միշտ նոր կ'ուզէ կինը միշտ,
Դրախտում որ Եւան դաւեց, դժոխքում էլ կը դաւէ,
Աստուածընծայ աչքն էլ դուրսն է՝ այս է կնոջ գինը միշտ...

* * *

Կակաչ, վայ թէ դու էլ հայ ես, որ սրտիդ մէջ սեւ կայ դեռ,
Թէ հայ աչքով նայեն Մասսին՝ ձիւնին անդամ սեւ կայ դեռ, —
Խէթ մի՛ նայէք իմ երգերին, խենթը դուք էք, ոչ թէ ես,
Մի սրտիս մէջ Հայոց վշտի հազար ու մի ձեւ կայ դեռ...

* * *

Ինչ էլ ասէք՝ Մասիս կ'ասեմ, անխորտակ եմ այս կռուում,
Իր ձիւնի պէս բարձր ու սուրբ, բայց մենակ եմ այս կռուում,
Իմաստուն եմ բիւրոց համար, մէկոց համար եմ խելառ,
Բայց բիւրերս լռում են դեռ, անյենակ եմ այս կռուում:

* * *

Ասում են, թէ ամէն հրաշք Աստծուց է դուրս գալիս,
Հրաշք էլ կայ՝ աստուածային մարդ–ոգուց է դուրս գալիս,
Բայց գոյութեան անագորոյն, անգութ կռիւն ինձ վկայ՝
Անմարդկային ամէն չար բան միշտ մարդուց է դուրս գալիս:

* * *

Արարատի ձիւնի նման սիրտս մաքուր մնաց միշտ,
Հայոց ծարաւ բոց կարօտին Բինգեոլ աղբիւր մնաց միշտ,
Ինչքան մնաց՝ ես մնացի բինգեոլներիս կարօտած՝
Ոտաբոբիկ իմ ճամբեքին աշխարհը հուր մնաց միշտ...

* * *

Սիրան ի՞նչ վազէ, երբ չի հասնում անմահ ոգու եռեւից,
Երբ որ կ'ընկնի սիրան իր ձիուց ճամբէն զոցող մի ցաւից,
Թեկուզ հարիւր տարի բախէ, հազար դար էլ բարախէ՝
Կը ցամաքի մարմնիս ծովն էլ ոգուս անծիր ծարաւից...

* * *

Սիրտս լինէր վառուող մի մոմ, որ երբ մարուէր՝ վառէի,
Արեւն Հայոց կանթեղ լինէր՝ Մասիսն ի վեր վառէի,
Ա՜խ, չէ, արեւն աշխարհին է, լոկ հայ սարս ես կ'ուզեմ,
Ողջ աշխարհի չարը մի խուրձ սեւ խոտ լինէր՝ վառէի...

© National Library of Armenia

Այն երեսուն եօթը թուին յոյսն ինձ խաչեց իմ դարում,
Գաղտնի մահը ամէն սրտի ահեր թաչեց իմ դարում, —
Զարի ձեռքով, ով լուռ եղեռն, դու ո՛ր վարդն էլ քաղեցիր՝
Կողքի վարդը, տերեւն անդամ չհառաչեց իմ դարում...

* * *

Մի՛ պարծենայ, թէ շատ ծառ ես տնկել կեանքում, — հողն ասաւ —
Մէկ էլ տեսար՝ քո տնկածը քո իսկ դաղաղը դարձաւ, —
Քանի դնում՝ ապերախտ է դառնում աշխարհն անթաղոյց, —
Գլխիս դրեց իր ոտքն՝ ով որ իմ սանդուխքով բարձրացաւ...

* * *

Հայոց վշտի բոլոր մոլոր, խոլոր դարերն իմ հոգում,
Վանայ ծովի արցունքն աչքին, դերի սարերն իմ հոգում,
Մասիսներիս վիշտը լալով վեր եմ ելնում Արագած՝
Արնոտելով ազգիս դիպած բոլոր քարերն իմ հոգում:

* * *

Մէկ որ ներես՝ հազար կանի — կինը՝ չարս կը տեսնեմ,
Շատ ներեցի... իմ խղճի մէջ խելագարս կը տեսնեմ,
Մի՛ հաւատայ անմեղսաքաւ արցունքներին կանացի,
Կնոջ դոհար աչքերի մէջ չիրմաքարս կը տեսնեմ:

* * *

Ես չգիտեմ, թէ իմ ազգին մի բան տալիս եմ, թէ ոչ,
Թեկուզ քնած իր մի յոյսին մի ձայն տալիս եմ, թէ ոչ,
Թէ ուզենայ՝ ես իմ ազգի դրան չունն էլ կը դառնամ, —
Ու չգիտեմ՝ իր Մասիսին մի բան տալիս եմ, թէ ոչ...

* * *

Ի՞նչպէս անեմ, որ իմ ազգը էլ վշտի տուղտ չմնայ,
Մասիս ելնենք ողջ ազգովին, էլ հայ պանդուխտ չմնայ,
Այն ժամ միայն, միայն այն ժամ ողջ ազգերին կը գրկեմ,
Երբ ուխտ գնամ Մասիսներիս՝ անկատար ուխտ չմնայ:

* * *

Խայամ, գինին ինձ թոյն դառաւ, էլ չեմ խելառ խմելու,
Հաֆէզ, կինը ցաւս բերաւ, էլ չեմ յամառ սիրելու,
Բայց ա՜խ, կին ու գինուց բացի, որ ինձ վշտի ծով դառան,
Ծովս ուրիշ թաղող չունեմ, էլ չեմ ես ինձ տիրելու...

* * *

Ես տան ծաղիկ... Երանի է դաշտի ծաղիկն ինձ տալիս,
Մինչ իմ աչքը դուրսն է անվերջ՝ միտքս նա է միշտ գալիս,
Ծաղկամանս այն է, ինչ որ վանդակն՝ հաւքին երկնատենչ,
Երնեկ նրան, ով իր վիշտն է ազատութեան մէջ լալիս...

Սար կայ՝ ինքն իր ծնած ոսկին աշխարհ հանել չի կարող,
Սար կայ՝ արծաթն հանում աշխարհ, թաղ է դարձնում ոսկեշող,
Մինչ իմ ոսկին երգիս գլխով չունի արծաթ մի թաղիկ,
Մեղքը քոնն է, ազգ իմ, գլխիդ տէրը դառնալ չես կարող:

* * *

Մի երակս խենթ է կարծես, հազար ու մէկս՝ իմաստուն,
Բայց հազարից է, որ ձիւնը իմ քունքերին է նստում,
Երնեկ խենթ ու խելառ լինէր հազար ու մէկն իմ սրտի,
Որ չզգայի, խոր չզգայի՝ մնար դարուն իմ սրտում...

* * *

Ինչքան խորն է զգում սիրտը՝ իր ուղեղն է այնքան մեծ,
Անզգայ սիրտն էր, որ երէկ հազար ու մի սիրտ խմեց,
Ամենամեծ վշտոտ սիրտն է ամէն գահի արժանի,
Իրաւ... բայց կեանքն ինչո՞ւ արաւ ինձ բիւր անդամ գահընկէց...

* * *

Աշխարհ եկայ, երբ չորս հազարամեայ դարն էր կործանուում,
Եղեռնահար Հայոց գմբէթն ու կամարն էր կործանուում,
Իմ ազգի պէս բախտս հազիւ անցաւ մազէ կամուրջով,
Երբ, Յիսուսից անմեղ Հայոց ողջ աշխարհն էր կործանուում:

* * *

Աչքիս մէկը՝ հօրս սիրով՝ ծովն է ծնել Սեւանայ,
Միւս աչքս՝ մօրս սիրով՝ ծովն է ծնել մեր Վանայ,
Վանայ ծովը մօրս կաթն է, Գիւմրին՝ օրոցքն հայրիկիս՝
Ահա ուսկից ես ծնուեցի Մհերի պէս մեր Սասնայ...

* * *

Թէ իրաւ է, որ աշխարհում իրաւ երկու աշխարհ կայ՝
Կ՚ուզեմ կեանքս նրանց միջով Արագի պէս զընգայ,
Որ զոյգին էլ ծաղկունքս տամ, համբոյրս տամ զոյգին էլ՝
Որ չբախուեն աչքերիս պէս զոյգ հայ ափերն իմ ծաղկեայ:

(Շարունակելի)

© National Library of Armenia